ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էյչ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	APC	BV1000I-GR	APC	Սույն տեխնիկական բնութագիրը սահմանում է մատակարարման ենթակա անխափան սնուցման սարքի նվազագույն տեխնիկական, գործառութային և երաշխիքային պահանջները: Մատակարարվող անխափան սնուցման սարքը պետք է լինի Line-Interactive UPS՝ AVR ավտոմատ լարման կարգավորմամբ: Սարքի նոմինալ հզորությունը պետք է լինի ոչ պակաս, քան 1000VA, ակտիվ հզորությունը՝ ոչ պակաս, քան 600W, մուտքային և ելքային լարումը՝ 230V AC, մուտքային լարման աշխատանքային միջակայքը՝ ոչ նեղ, քան 170–280V, հաճախականությունը՝ 50/60Hz ավտոմատ ճանաչմամբ: UPS-ը պետք է ունենա ոչ պակաս, քան 4 հատ Schuko / CEE 7 տեսակի ելքային վարդակ, որոնք պետք է ապահովեն մարտկոցային պահուստային սնուցում և

				գերլարման պաշտպանություն։ Մարտկոցը պետք է լինի ոչ պակաս, քան 12V / 9Ah, լիցքավորման տիպային ժամանակը՝ ոչ ավելի, քան 8 ժամ, իսկ մարտկոցային ռեժիմի անցման ժամանակը՝ տիպային ոչ ավելի, քան 6 ms, առավելագույնը՝ ոչ ավելի, քան 10 ms։ Սարքը պետք է ունենա LED կարգավիճակի ցուցադրում, ձայնային ազդանշաններ մարտկոցային աշխատանքի, մարտկոցի ցածր լիցքի և գերբեռնվածության դեպքում, ինչպես նաև պաշտպանություն գերբեռնվածությունից, կարճ միացումից, լարման տատանումներից և գերլարումներից։ Պաշտպանության աստիճանը պետք է լինի առնվազն IP20, աշխատանքային ջերմաստիճանը՝ 0°C-ից մինչև +40°C կամ ավելի լայն միջակայք։ Սարքը պետք է ունենա պատին կամ հարթ մակերեսի վրա ամրացման հնարավորություն՝ արտադրողի կողմից նախատեսված կառուցվածքային լուծմամբ, առանց սարքի վրա ինքնաշեն փոփոխման կամ լրացուցիչ ոչ գործարանային միջամտության։ Սարքը պետք է ունենա CE կամ համարժեք համապատասխանության սերտիֆիկացում և համապատասխանի UPS սարքերի համար կիրառելի EN/IEC 62040 շարքի կամ համարժեք միջազգային ստանդարտների պահանջներին՝ էլեկտրական անվտանգության և էլեկտրամագնիսական համատեղելիության մասով։ Պարտադիր պայման Մատակարարվող UPS սարքը պետք է լինի նոր, գործարանային փաթեթավորմամբ, մատակարարման պահին UPS սարքի և դրա ներքին մարտկոցի արտադրության ամսաթիվը չպետք է գերազանցի 12 ամիսը (Սպասարկումը՝ 0025, Երևան, Խանջյան փող.,

				50 շենք («Թեքեյան» կենտրոնի շենքում)։ Մատակարարը պարտավոր է ներկայացնել կամ ապահովել սարքի և ներքին մարտկոցի արտադրության տարվա և ամսվա նույնականացման հնարավորություն՝ արտադրողի կողմից սահմանված նույնականացման եղանակով՝ պիտակի, սերիական համարի, արտադրողի պաշտոնական տվյալների բազայի կամ արտադրողի/լիազորված ներկայացուցչի տեղեկանքի միջոցով։ Արտադրության տարվա և ամսվա նույնականացման անհնարինության դեպքում մատակարարված ապրանքը համարվում է տեխնիկական բնութագրին չհամապատասխանող։ Մատակարարվող սարքի համար պետք է ապահովվի ոչ պակաս, քան 1 տարի երաշխիքային սպասարկում՝ սկսած ապրանքի հանձնման-ընդունման օրվանից։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Эйдж Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
4				